

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԵՏՐՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ  
ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 02**

ք. Երևան

«03» «*March*» 2018թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար Վ.Ստեփանյանի մի կողմից, և «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության ղեկավար Ա. Լոբյանի, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի գործառական դասակարգման 09 բաժնի 04 խմբի 02 դասի «03. Հետրուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում» ծրագրի շրջանակներում «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման պարտավորությունները:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. Հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Հետրուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում» ծրագրով նախատեսված միջոցների հաշվին:

2.1.2 Կատարողին փոխանցել սահմանված կարգով հաստատված նախահաշվային փաստաթղթերը:

2.1.3 Պարբերաբար վերլուծել Կատարողի կողմից կատարված ծախսերը, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման համար:

#### 2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ անմիջականորեն չմիջամտելով վերջինի գործունեությանը:

2.2.2. Կատարողից պահանջել ներկայացնելու հաշվետվություն կամ այլ պահանջվող տեղեկատվություն:

2.2.3 Պարբերաբար վերահսկել ներկայացվող հաշվետվությունների հավաստիությունն ու ճշտությունը:



2.2.4. Վերահսկել Կատարողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.2.5. Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

### **2.3. Կատարողը պարտավոր է՝**

2.3.1. Ապահովել սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

2.3.2. Ամսական կտրվածքով Պատվիրատուին ներկայացնել իր կատարած ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն:

2.3.3. Պատվիրատուի առաջին իսկ պահանջով ներկայացնել աշխատանքների կազմակերպման և կատարման վերաբերյալ հաշվետվություն կամ այլ պահանջվող տեղեկատվություն:

2.3.4. Հաշվետու տարվա վերջին վերադարձնել գումարի չծախսված միջոցները:

### **2.4. Կատարողը իրավունք ունի՝**

2.4.1. Իր կողմից իրականացվող աշխատանքների կազմակերպման և կատարման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Պատվիրատուին:

2.4.2 Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

## **3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ**

3.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված գինը կազմում է 114 216 300 (մեկ հարյուր տասնչորս միլիոն երկու հարյուր տասնվեց հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, որը ներառում է ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողների ուսման վարձի փոխհատուցումը նպաստի ձևով:

3.2. Պայմանագրի 3.1-ին ենթակետում սահմանված գումարը Կատարողին հատկացվում է ըստ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով հաստատված տարեկան հատկացումների եռամսյակային (աճողական) բաշխվածությանը համապատասխան՝ ամսական կտրվածքով: Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը:

## **4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

Կատարողը աշխատանքների կատարման մասին հաշվետվությունները ներկայացնում է Պատվիրատուին յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 15-ը, տարեկան հաշվետվությունները՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 10-ը՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թ. ապրիլի 1-ի N 176-Ն, ՀՀ ֆինանսների նախարարի 2013թ. փետրվարի 4-ի N 104-Ն և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. մարտի 28-ի N 324-Ն հրամանների ձևերի համապատասխան:

## **5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը



չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը կնքվում է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են կողմերի ստորագրությամբ:

## 8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

«ՀՀ կառավարության աշխատակազմ»  
պետական կառավարչական հիմնարկ

Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության  
հրապարակ, կառավարական տուն, 1  
Բանկ՝ ՀՀ Ֆեդորձառնական վարչություն  
Հ/Հ 900011018380  
ՀՎՀՀ 02505554

Աշխատակազմի ղեկավար՝



Վ. Ստեփանյան

### ԿԱՏԱՐՈՂ՝

«ՀՀ պետական կառավարման ակադեմիա»  
պետական ոչ առևտրային կազմակերպություն

Հասցե՝ ք. Երևան, Կիլյան 8  
Բանկ՝ «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ  
Հ/Հ 220003320227000  
ՀՎՀՀ 00035088

Ռեկտոր՝

Ա. Լոբյան

Կ. Տ.

